

Կ Ա Ր Գ

ԷԼԵԿՏՐՈՆԱՅԻՆ ՀՄԿՈՂՈՒԹՅԱՆ ՀԱՄԱՐ ՏԵՄԱՆԿԱՐԱՀԱՆՈՂ,
ԼՈՒՍԱՆԿԱՐԱՀԱՆՈՂ, ՏԵՍԱԶԱՅՆԱԳՐՈՂ ՏԵԽՆԻԿԱԿԱՆ
ՄԻՋՈՑՆԵՐԻ ԿԻՐԱՌՄԱՆ

1. Սույն կարգով կարգավորվում են Հայաստանի Հանրապետության քրեա-կատարողական օրենսգրքով սահմանված՝ էլեկտրոնային հսկողության ընթացքում կիրառվող տեսանկարահանող, լուսանկարահանող և տեսաձայնագրող տեխնիկա-կան միջոցների բնութագիրն ու չափանիշները և դրանց կիրառման հետ կապված հարաբերությունները:

2. Սույն կարգի իմաստով տեխնիկական միջոցներ են ցանկացած գործիք-ներ, սարքեր, համակարգեր, տարբեր տեսակի հարմարանքներ, որոնց միջոցով հնարավոր է տեսանկարահանել, լուսանկարահանել և տեսաձայնագրել:

3. Տեխնիկական միջոցներն օգտագործելիս՝ պահպանվում են օրինակա-նության, հավաստիության, համաչափության և անվտանգության սկզբունքները:

4. Տեխնիկական միջոցների օգտագործումը պետք է հետապնդի օրինական նպատակ, իսկ դրանց կիրառման արդյունքում ստացված նյութերը կարող են օգտագործվել դատավարական, հանցագործությունների բացահայտման կամ կանխման, խափանման նպատակներով (օրինականության սկզբունք):

5. Տեխնիկական միջոցների օգտագործման արդյունքում ստացված տվյալները պետք է լինեն ամբողջական և ճշգրիտ (հավաստիության սկզբունք):

6. Տեսաձայնագրող սարքերը պետք է կահավորվեն այնպես, որ դրանցով իրականացվող տեսահսկումը (տեսահսկման դաշտը) համապատասխանի անձնա-կան տվյալների մշակման համաչափության՝ հնարավորինս բացառելով դրանում կողմնակի անձանց հայտնվելը (համաչափության սկզբունք):

7. Տեխնիկական միջոցներ կիրառողը պետք է գնահատի տեխնիկական միջոցների հնարավոր բացասական ազդեցությունը: Էլեկտրոնային հսկողության

ընթացքում տեխնիկական միջոցների օգտագործումը չպետք է վտանգի մարդու կյանքը, առողջությունը, իրավունքներն ու ազատությունները (անվտանգության սկզբունք): Տեխնիկական միջոցներ կիրառողն էլեկտրոնային հսկողություն իրականացնելիս պետք է ապահովի հարակից տարածքում պետական այլ մարմնի տարածքի որոշ հատվածների էլեկտրոնային հսկողության տեսադաշտում չհայտնվելը, իսկ դրա անհնարինության դեպքում, պետք է տվյալ պետական մարմնի հետ նախապես համաձայնեցնի տեխնիկական միջոցի տեղադրման հարցը:

8. Տեսաձայնագրումը և լուսանկարահանումն իրականացվում են գունավոր եղանակով՝ համապատասխանաբար տեսաձայնագրման և լուսանկարահանման հնարավորություն ունեցող թվային սարքով:

9. Թվային տեխնիկական սարքում ամրագրված ամսաթիվը և ժամը պետք է համապատասխանեն էլեկտրոնային հսկողության իրականացման իրական ամսաթվին և ժամին: Տեսաձայնագրման ֆայլից պետք է հնարավոր լինի պարզել տեսաձայնագրման իրականացման ժամը և օրը:

10. Տեխնիկական միջոցների կիրառման անընդհատությունն ապահովվում է քրեակատարողական հիմնարկի կողմից:

11. Տեխնիկական միջոցներից տեսահսկման համակարգը ներառում է՝

NN ը/կ	Անվանում	Նկարագիր
1.	Սերվեր	սերվեր Premium, 96 ՏԲ , 2U, առնվազն Windows server 2016,
2.	Մալուխ	DAC-մալուխ (twinax) առնվազն 10 Gb ինտերֆեյսի միացնելու համար
3.	Օպտիկական փոխակերպիչ	SFP-փոխակերպիչ առնվազն 10 Gb ինտերֆեյսին միացնելու համար
4.	Տեսախցիկ	առնվազն 3x3 Մեգապիքսել, WDR, (LightCatcher, Lightfinder, Starlight կամ համարժեք) ոչ պակաս 4մմ, միայն տեսախցիկ
5.	Աքսեսուար	փոխակերպիչ դրսի մոնտաժի համար
6.	Աքսեսուար	գմբեթ դրսի մոնտաժի համար
7.	Փոխակերպիչ	օպտիկական ԻԿ-մոդուլ, հեռավորություն առնվազն 30մ
8.	PoE փոխակերպիչ	միալար Gigabit PoE++ փոխակերպիչ ներքին օգտագործման համար, առնվազն 60 Վտ

9.	Տեսախցիկ	առնվազն 2.0 մեգապիքսել գմբեթաձև տեսախցիկ ներսի օգտագործման համար (1080p) WDR, (LightCatcher, Lightfinder, Starlight կամ համարժեք) գիշեր/ցերեկ ոչ պակաս 3.3-9 մմ վարիֆոկալ օբյեկտիվ f/1.3 P-iris, ինտեգրված ԻԿ-, նոր սերնդի անալիտիկա
10.	Տեսախցիկ	առնվազն 8.0 մեգապիքսել գմբեթաձև տեսախցիկ ներսի օգտագործման համար (4K) WDR, (LightCatcher, Lightfinder, Starlight կամ համարժեք) գիշեր/ցերեկ, ոչ պակաս 4.9-8 մմ վարիֆոկալ օբյեկտիվ f/1.8 P-iris, ինտեգրված ԻԿ-, նոր սերնդի անալիտիկա
11.	Տեսախցիկ	առնվազն 12.0 մեգապիքսել, տեսախցիկ "Ձկան աչք" H4 Fisheye, (LightCatcher, Lightfinder, Starlight կամ համարժեք) գիշեր/ցերեկ, ոչ պակաս 1.45մմ f/2.2, ԻԿ
12.	Տեսախցիկ	առնվազն 2.0 մեգապիքսել գլանաձև տեսախցիկ (1080p) WDR, (LightCatcher, Lightfinder, Starlight կամ համարժեք) ոչ պակաս 9-22 մմ վարիֆոկալ օբյեկտիվ f/1.6 P-iris, ինտեգրված ԻԿ-, նոր սերնդի անալիտիկա
13.	Տեսախցիկ	առնվազն 4.0 մեգապիքսել գնդաձև տեսախցիկ WDR, (LightCatcher, Lightfinder, Starlight կամ համարժեք) ոչ պակաս 3.3-9 մմ վարիֆոկալ օբյեկտիվ f/1.3 P-iris, ինտեգրված ԻԿ-, նոր սերնդի անալիտիկա
14.	Ջերմային տեսախցիկ	առնվազն 320x256, դրսի օգտագործման ջերմային տեսախցիկ, ոչ պակաս 9.1 մմ f/1.0, 9Hz, NETD<60mK
15.	Ջերմային տեսախցիկ	առնվազն 320x256, Уличный тепловизор, ոչ պակաս 4.3 մմ f/1.0, 9Hz, NETD<60mK, նոր սերնդի ինքնուս անալիտիկա
16.	Տուփ	գլանաձև տեսախցիկների համար տուփ
17.	Տեսակցիկ PTZ	առնվազն 2 մեգապիքսել ապակի մաքրող հարմարանքով. օպտիկական հզորություն առնվազն 30x, ինքնուս վիդեոանալիտիկա, վանդալապաշտպան IK10, IP66, ԻԿ 250 մետր
18.	Փոխակերպիչ	տեսախցիկի սնուցման ինժեկտոր
19.	Աքսեսուար	պատին ամրացնելու համար կռանշտեյն
20.	Աքսեսուար	տեսախցիկը հենասյան վրա ամրակցելու աղապար
21.	Տեսախցիկ	4K (ոչ պակաս 8 մեգապիքսել) (LightCatcher, Lightfinder, Starlight կամ համարժեք) H.264 տեսախցիկ
22.	Օբյեկտիվ	Tamron կամ համարժեք 24-70, f/2.8, 2e սերնդի, Auto-Iris կամ համարժեք, վարիֆոկալ օբյեկտիվ

23.	Աքսեսուար	հավելյալ PoE + մոուլ, սնում է տեսախցիկը և պատյանը po PoE.
24.	Աքսեսուար	ինժեկտոր PoE +, 30Վտճ գեգաբիտանոց պորտ 802.3at, класс-4.
25.	Ծրագրային ապահովում	հավաստագիր ծրագրային ապահովման
26.	Աշխատանքային կայան	պրոֆեսիոնալ աշխատանքային կայան առնվազն միջև 4 մոնիթոր միացման հնարավորությամբ
27.	Մոնիթոր	մոնիթոր, առնվազն 24", LCD, 2.3 մեգապիքսել, 16:10 Widescreen Aspect Ratio
28.	Կառավարման վահանակ	պրոֆեսիոնալ USB կառավարման վահանակ
29.	Մոնիթոր	մոնիթոր, առնվազն 43" LCD 4K UHD, 16:9 Widescreen Aspect Ratio - EU
30.	Ծրագրային ապահովում	ծրագրային հավաստագիր 1 երթևեկելի գոտում ճանաչման համար
31.	Ծրագրային ապահովում	ծրագրային հավաստագիր դեմքի ճանաչման համար
32.	Ծրագրային ապահովում	հավաստագիր ռեգերվային գործառույթի համար
33.	Տեսախցիկ	առնվազն 3x3 մեգապիքսել, WDR, (LightCatcher, Lightfinder, Starlight կամ համարժեք) առնվազն 4մմ, տեսախցիկ
34.	Ջերմային տեսախցիկ	ոչ պակաս 320x256, դրսի օգտագործման ջերմային տեսախցիկ, առնվազն 9.1 մմ f/1.0, 9Hz, NETD<60mK, ինքնուս անալիտիկա
35.	Տեսախցիկ PTZ	ոչ պակաս 2 մեգապիքսել, ապակի մաքրող սարքով. օպտիկական հզորություն 30x, ինքնուս վիդեոանալիտիկա, վանդալակայուն IK10, IP66, ԻՎ 250 մետր
36.	Տեսախցիկ	4K (ոչ պակաս 8 մեգապիքսել) (LightCatcher, Lightfinder, Starlight կամ համարժեք) H.264 տեսախցիկ

12. Տեխնիկական միջոցներից տեսահսկման համակարգի ռեգերվային բաղադրիչներն են՝

1.	Սերվեր	սերվեր Premium, 96 T6 , 2U, առնվազն Windows server 2016,
----	--------	--

2.	Աքսեսուար	DAC-մալուխ (twinax) առնվազն 10 Gb ինտերֆեյսի միացնելու համար
3.	Փոխակերպիչ	SFP-փոխակերպիչ առնվազն 10 Gb ինտերֆեյսի միացնելու համար
4.	Ծրագրային ապահովում	ծրագրային ապահովման ռեզերվային հավաստագիր

13. Տեխնիկական միջոցներից ցանցային ենթակառուցվածքն է՝

NN ը/կ	Անվանում	Նկարագիր (port)
1.	Օպտիկական ցանցային սարք	48
2.	PoE ցանցային սարք	24
3.	PoE ցանցային սարք	48
4.	PoE ցանցային սարք	16
5.	PoE ցանցային սարք	8
6.	PoE ցանցային սարք	4
7.	Մետաղական արկղ	500X800X200
8.	Հեռահար կառավարվող հոսանքի բաշխիչ	
9.	Սերվերային պահարան	
10.	Անխափան սնուցման սարք	
11.	Օպտիկական բաժանարար	8
12.	Օպտիկական բաժանարար	48
13.	Վարդակ	1
14.	Օպտիկական փոխակերպիչ	
15.	Օպտիկական մուֆտ	

16.	Ցանցային մալուխ	SFTP Cat5e
17.	Օպտիկական մալուխ	8 F/O
18.	Օպտիկական մալուխ	48 F/O
19.	Հոսանքի մալուխ	2X6
20.	Մալուխ ցանցային	UTP Cat5e
21.	Մալուխների մոնտաժման տրեյ մեծ	
22.	Մալուխների մոնտաժման տրեյ փոքր	

14. Տեխնիկական աշխատանքներն են՝

- 1) տեսախցիկի տեղադրում.
- 2) մետաղական արկղի տեղադրում.
- 3) օպտիկական մալուխների զոդում.
- 4) սերվերային Սենյակի մոնտաժում.
- 5) ցանցային մալուխի մոնտաժում.
- 6) օպտիկական մալուխի մոնտաժում.
- 7) հոսանքի մալուխի մոնտաժում.
- 8) մալուխ ցանցային մոնտաժում.
- 9) մալուխների մոնտաժման տրեյ մեծ.
- 10) մալուխների մոնտաժման տրեյ փոքր:

15. Սույն կարգում նախատեսվող տեխնիկական միջոցների քանակը կախված է քրեակատարողական հիմնարկի և դրա տարածքի առանձնահատկությունների հետ:

16. Տեսանկարահանող, լուսանկարահանող և տեսաձայնագրող միջոցները կիրառվում են առանց անջատումների՝ 24 ժամ 7 օր սկզբունքով և պետք է ապահովված լինեն մեկուսացված էներգամատակարարմամբ այնպես, որպեսզի հոսանքի տատանումները, հոսանքազրկումները, տեխնիկական այլ խափանումները

չանդրադառնան տեսանկարահանող, լուսանկարահանող կամ տեսաձայնագրող անընդհատության վրա:

17. Տեսանկարահանող և տեսաձայնագրող միջոցներով լուսանկարահանում կատարելը պետք է լինի ավտոմատացված և ցանկացած տեսանյութից լուսանկար ստանալու համար անհրաժեշտ է համապատասխան ծրագրային ապահովում:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՎԱՐՉԱՊԵՏԻ ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ
ՂԵԿԱՎԱՐ

Ա. ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ